ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 8, 1964 Общественные науки

Ա. Ս. Սադոյան

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐՈՎ. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՇԱՐԺՄԱՆ ԾԱՎԱԼՈՒՄԸ ՄԵՐ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Սովետական հասարակությունը մտել է իր զարգացման նոր ժամանակաշրջանը՝ կոմունիզմի ծավալուն կառուցման ժամանակաշրջանը։ Կոմունիստական հասարակություն կառուցվում է գիտական կոմունիզմի թեորիայի հիման վրա։ Ընդհանրացնելով մարդկային հասարակության անցյալի փորձը, մարքսիզմի թեորետիկները մշակել են կոմունիստական անդասակարգ հասարակության կառուցման օրինաչափությունները։ Մարքսն ու Էնգելսը կոմունիստական հեղափոխությունը համարել են մարդկության թոիչք անհրաժեշտության թագավորությունից դեպի ազատության թագավորությունը[1]։ Բացահայտելով կապիտալիզմի առաջացման, զարգացման և մահացման օրենքները, նրանք հիմնավորել են կոմունիստական հասարակության պատմական անխուսափելիության թեորիան, ապացուցել անդասակարգ հասարակության հաղթանակի պատմական անհրաժեշտությունը։

Ստեղծագործաբար զարգացնելով ու հարստացնելով գիտական կոմունիզմի հիմնադիրներ Մարքսի ու Էնգելսի ուսմունքը, սովետական պետության ստեղծող Վ. Ի. Լենինը մշակել է պետության մասին ուսմունքը, զարգացրել մարքսիստական թեորիան՝ պրոլետարիատի դիկտատուրայի մասին, բնութագրել սոցիալիստական պետությունը կոմունիստական ինքնավարության վերածելու ընդհանուր օրինաչափությունները։

ՍՄԿՊ Ծրագիրը, որը հիմնված է Մարքսի, Էնգելսի, Լենինի ուսմունքի և գիտական եզրակացությունների վրա, մի նոր առաջընթաց քայլ հանդիսացավ պետության մասին թեորիայի մշակման գործում։ Ծրագրում առաջին անգամ տրված է կոմունիստական հասարակության կառուցման կոնկրետ, գիտականորեն հիմնավորված պլանը։ ՍՍՌՄ-ի և ժողովրդական դեմոկրատիայի պետությունների հարուստ փորձի հիման վրա, ՍՄԿՊ Ծրագրում մշակված են պետության վերաբերյալ շատ հարցեր՝ ժամանակակից բուրժուական պետության զարգացման տենդենցի գնահատումը, սոցիալիզմին անցնելու ձևերը, պրոլետարիատի դիկտատուրայի բազմազան ձևերի, համաժողովրդական պետության, կոմունիզմի անցման ժամանակաշրջանում պետության ֆունկցիաների, պետության մահացման պայմանների մասին հարցեր, ցույց է տրված սոցիալիստական պետությունից կոմունիստական հասարակական ինքնավարության անցնելու կոնկրետ ձևերը, պրոլետարիատի դիկտատուրայի պետությունից համաժողովրդական պետության անցնելու պայմանները։

ՍՄԿՊ Ծրագրում, կուսակցության XXII համագումարի հաշվետու զեկուցման մեջ նշված են կոմունիստական հասարակական ինքնավարության անցնելու ժամանակ սոցիալիստական դեմոկրատիայի զարգացման հիմնական

---

1 Ֆ. Էնգելս, Անտիդյուրինգ, Հայպետհրատ, 1952, էջ 364։

ուղղությունները, բոլոր քաղաքացիներին հասարակության գործերի կառավարմանը մասնակից դարձնելու ուղիները։ Կուսակցության Ծրագիրը պահանջում է մշտապես կատարելագործել ժողովրդական ներկայացուցչությունները, սովետական ընտրական սիստեմը՝ կոմունիստական շինարարության կարևորագույն հարցերի համաժողովրդական քննարկման, իշխանության օրգանների գործունեության նկատմամբ ժողովրդական վերահսկողություն սահմանելու, պետական և հասարակական կազմակերպություններում ղեկավար աշխատողների հետևողական ընտրականության և հաշվետվության սկզբունքներն իրականացնելու միջոցով։

Սովետական դեմոկրատիայի հետագա զարգացումը, պետության կառավարման մեթոդների ու ձևերի կատարելագործումը հնարավորություններ կընձեռնեն սոցիալիստական պետության աստիճանական վերափոխման և կոմունիստական հասարակական ինքնավարության անցնելու համար։

Ինչպես կյանքն է ցույց տալիս հասարակական ինքնավարության օրգանները ձևավորվում են սովետների, արտադրությունների, կոոպերատիվների և հասարակական այլ կազմակերպությունների բազայի վրա։ Սակայն այդ նորաստեղծ կազմակերպությունները ունեն բոլորովին այլ բովանդակություն։ Հասարակական ինքնավարությունը իրենից ներկայացնում է կառավարման այնպիսի միաձույլ, խելացի, կազմակերպական տեսակետից ճիշտ կառուցվածք ունեցող ինքնուրույն ղեկավարման օրգան, որը բոլոր քաղաքացիների համար ստեղծում է լայն հնարավորություններ ակտիվորեն մասնակցելու հասարակական գործին, տնտեսության ու կուլտուրական շինարարության կառավարմանը։ «Միմիայն կոմունիզմը,— նշում է Լենինը,— կարող է իսկապես լիակատար դեմոկրատիա տալ, և որքան ավելի լիակատար լինի այդ դեմոկրատիան, այնքան ավելի շուտով անպետք կդառնա նա, ինքն իրեն կմահանա»[2]։

Հասարակական հիմունքներով աշխատանքի շարժումը ծնունդ է առել դեռևս Հոկտեմբերյան սոցիալիստական ռևոլյուցիայի հաղթանակի առաջին օրերին։ Հաղարավոր բանվորներ ու գյուղացիներ, որպես դեպուտատներ ակտիվորեն մասնակցում էին պետության ներկայացուցչական հիմնարկներում, որոնք ի տարբերություն մինչ այդ գոյություն ունեցող պրոֆեսիոնալ պառլամենտականների, իրենց ֆունկցիաները սիրով կատարում էին առանց վարձատրության։ Կոմունիստական շաբաթօրյակներին մասնակցող հաղարավոր բանվորներ ու գյուղացիներ 1919 թ. առանց վարձատրության վերականգնում էին պատերազմի ժամանակ քայքայված տնտեսությունը, հասարակական կարգ ու կանոն էին պահպանում բանվորական դրուժինաները ու կարգապահական ընկերական դատարանները։

Վ. Ի. Լենինը հսկայական նշանակություն էր տալիս հասարակության ընդհանուր գործին աշխատավորների լայն մասսաների ընդգրկմանը։ Դրանում մեծ առաջնորդը տեսնում էր կոմունիստական ապագա հասարակության ծիլերը։ «Կոմունիստականն,— ասում էր նա,— սկսվում է միայն այն ժամանակ, երբ հրապարակ են գալիս շաբաթօրյակները, այսինքն՝ առանձին անձերի անվարձ, ոչ մի իշխանության, ոչ մի պետության կողմից չնորմավորված աշխատանքը, որ լայն մասշտաբով կատարվում է հասարակական օգտի համար»[3]։

[2] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 25, էջ 602։
[3] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 30, էջ 358—359։

Ներկայումս կոմունիստական աշխատանքի շարժմանը մասնակցում է ավելի քան 29 միլիոն մարդ։ Կոմունիստական աշխատանքի կոլեկտիվների պատվավոր կոչման համար պայքարում են 62 հազար ձեռնարկություն, 270 հազար արտադրամաս, հերթափոխ, բաժանմունք և ֆերմա։ Այն արդեն նվաճել են 3400 ձեռնարկություն, 443 հազար բրիգադ[4]։

Կոմունիստական աշխատանքի շարժման հետ մեկտեղ զարգանում են աշխատանքի և արտադրության կազմակերպմանը բանվորներին, մասնագետներին ու ծառայողներին մասնակից դարձնելու բազմազան ձևեր։ Արդյունաբերությունում, շինարարությունում, տրանսպորտում, գիտական հիմնարկներում գործում են ավելի քան 21 հազար հասարակական կոնստրուկտորական ու տեխնոլոգիական բյուրոներ, տնտեսական վերլուծության մոտ 25 հազար հասարակական բյուրոներ և խմբակներ, տեխնիկական ինֆորմացիայի 13,5 հազար հասարակական բյուրոներ, նորարարների հազարավոր խորհուրդներ, հասարակական գիտահետազոտական ինստիտուտներ ու լաբորատորիաներ, ստեղծագործական այլ միավորումներ։ Դրանցում աշխատում են ավելի քան մեկուկես միլիոն ինժեներներ, տեխնիկներ, նորարար բանվորներ[5]։

Հասարակական հիմունքների զարգացումը պայմաններ է ստեղծում մի շարք վճարովի աշխատանքներ անվճար, հասարակական աշխատանքներով փոխարինելու համար, իսկ դա իր հերթին կնպաստի հաստիքային աշխատողների կրճատմանը։

Պլանավորման և հաշվառման օրգանները, տնտեսության ղեկավարման և կուլտուրայի զարգացումը ղեկավարող օրգանները, որոնք այժմ պետական օրգաններ են, կկորցնեն իրենց քաղաքական բնույթը և կդառնան հասարակական ինքնավարության օրգաններ[6]։

Այժմ մեր հանրապետության տարբեր քաղաքներում, բանվորական ավաններում, կոլտնտեսություններում, սովխոզներում լայն գործունեություն են ծավալել հասարակական հիմունքներով աշխատող այնպիսի կազմակերպություններ, ինչպիսիք են՝ տնտեսական վերլուծության բյուրոները, ռացիոնալիզատորների և գյուտարարների, տեխնիկական առաջադիմության խորհուրդները, կոնստրուկտորական, տեխնոլոգիական, տնտեսական կազմակերպությունները՝ ձեռնարկություններում և պետական օրգաններում, արտահաստիքային բաժիններն ու հրահանգիչները՝ սովետներում, հասարակական խորհուրդները առողջապահական, կենցաղսպասարկման հիմնարկներում, կուլտուրայի պալատներում, գրադարաններում, ժողովրդական դրուժինաները, ընկերական դատարանները և այլն։

ՀԱՄԽ-ի հանրապետական կոմիտեներում ստեղծված են 133 հանձնաժողովներ, արտահաստիքային բաժիններ և խմբեր, որոնցում ընդգրկված են 1042 ակտիվիստներ, կան 848 արտահաստիքային հրահանգիչներ, տեսուչներ, հսկիչներ և հավատարմատար բժիշկներ։ 1095 արտադրական խորհրդակցություններում ընդգրկված են 41478 մարդ, այդ թվում բանվորներ 31253[7]։

Հասարակական հիմունքները ներթափանցել են կուսակցական օրգանները։ Այժմ կուսակցական շրջկոմներում, բաղկոմներում, կոմիտեներում,

4 «Սովետական Հայաստան», 29 ապրիլի, 1964։

5 Նույն տեղում։

6 Նույն տեղում։

7 Տե՛ս ՀԱՄԽ-ի կազմհրահանգչական բաժնի արխիվ։

սկզբնական կազմակերպություններում հասարակական հիմունքներով աշխատում են հազարավոր կոմունիստներ՝ քարտուղարներ, բաժնի վարիչներ, հրահանգիչներ։ Ստեղծված են կազմակերպական, գաղափարական աշխատանքի հանձնաժողովներ, արդյունաբերության, տրանսպորտի, շինարարության, գյուղատնտեսության, առևտրի բաժիններ, քաղաքական լուսավորության տներ, ադմինիստրացիայի նկատմամբ վերահսկողության ֆունկցիան իրականացնող հանձնաժողովներ, կուսակցական-պետական վերահսկողությանն աջակցող խմբեր ու պոստեր, կոմերիտմիության գծով՝ «լուսարձակներ», օպերատիվ շտաբներ և շատ այլ կազմակերպություններ։ Այն գործունեություն են ծավալել հասարակական հիմունքներով աշխատող կուլտուրայի, տեխնիկական առաջադիմության, տնտեսագիտության, առողջապահության ժողովրդական համալսարանները, ասպիրանտուրաները, գիտահետազոտական ինստիտուտները, տեխնիկումներն ու դասընթացները, ժողովրդական կոնսերվատորիաները, երաժշտական ուսումնարանները և շատ այլ ժողովրդական ինքնագործ կազմակերպություններ։ Հասարակական հիմունքներով գործող այդ կազմակերպություններում ընդգրկված հազարավոր քաղաքացիներ առանց հարկադրման, գիտակցաբար, իրենց կամքով, կատարում են հասարակական աշխատանք և ակտիվ գործունեությամբ նպաստում կոմունիստական հասարակության կառուցման վեհ գործին, պայմաններ ստեղծում համաժողովրդական պետությունից կոմունիստական հասարակական ինքնավարության անցնելու համար։

1962 թ. մայիսին Երևանում սկսեցին գործել առաջին «Կոմերիտական լուսարձակները»։ Այժմ հանրապետությունում դրանց թիվը հասնում է 845-ի, որտեղ ընդգրկված են 8000 երիտասարդներ ու աղջիկներ[8]։ Երիտասարդության այդ մեծ բանակը, որի շարքերն օրեցօր ստվարանում են, ակտիվ պայքար է կազմակերպում հակահասարակական երևույթների, ձեռնարկություններում, տրանսպորտում և այլուր հանդիպող թափթվվածության, անպատասխանատվության ու բյուրոկրատիզմի երևույթների դեմ։ Հանրապետությունում հասարակական հիմունքներով գործում են 35 տեխնիկում և ինստիտուտ, որտեղ ընդգրկված են 3500 կոմերիտականներ և երիտասարդներ[9]։

Արդեն երրորդ տարին է ինչ Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտին կից հասարակական հիմունքներով գործում է շինարարական տեխնիկումը, որտեղ շինարարների մասնագիտություն են ձեռք բերում մեծ թվով երիտասարդներ։ Տեխնիկումում հասարակական հիմունքներով, առանց վարձատրության դասավանդում են երիտասարդ մասնագետներ Ալբերտ Մարգարյանը, Էդուարդ Առաքելյանը, Ռոբերտ Խարազյանը, Հարություն Խալաթյանը և ուրիշներ։ Տեխնիկումի ուսմասվարն է ինստիտուտի հիդրավլիկայի ամբիոնի ասիստենտ Ալբերտ Մարգարյանը[10]։

Չորս տարի առաջ իր առաջին պարապմունքները սկսեց արվեստի աշխատողների տանը կից ստեղծված հասարակական հիմունքներով կերպարվեստի ստուդիան, որի ղեկավարն է ասպիրանտ Հրաչյա Բաբայանը։ Ստուդիայում հասարակական կարգով դասեր է տալիս ժողովրդական նկարիչ Մհեր Աբեղյանը։ Այստեղ սովորում են տարբեր մասնագիտության ու պրոֆեսիայի երի-

---

8 «Коммунист», 25 декабря, 1963.

9 Նույն տեղում։

10 «Երեկոյան Երևան», 3 ապրիլի, 1964։

տասարդներ՝ Վ. Ի. Լենինի անվան էլեկտրամեքենաշինական գործարանի բանվոր Հովհաննես Սիմոնյան, ավագ սերժանտ Վլադիմիր Կոռյանը և ուրիշներ։ № 128 դպրոցի ռուսաց լեզվի դասատու Ս. Առաքելյանը ավարտելով ստուդիայի դասընթացները, այժմ հասարակական հիմունքներով դասեր է տալիս։

Կիրովականի ուսուցիչների տունը հասարակական հիմունքներով կազմակերպվել է մանկական թատրոն, որի դիրեկտորն է մանկավարժ Ա. Անդրեասյանը, ռեժիսյորը՝ Հ. Աբելյանի անվան թատրոնի դերասանուհի Մ. Թիրոսյանը, դերասանները՝ քաղաքի դպրոցների 7—11 դասարանների մի խումբ աշակերտներ։

Հայկական ՍՍՌ սպորտային ընկերությունների և կազմակերպությունների միության գիտամեթոդական խորհուրդը 1958 թ. ձեռնարկել և մինչև այս տարի հասարակական հիմունքներով հրատարակել է ավելի քան 160 գիրք ու բրոշյուր, որոնց ընդհանուր տպաքանակը հասնում է ավելի քան 160 հազար օրինակի։ Գրքերի ու բրոշյուրների հեղինակներն են աշխարհի դավաթի նվաճման մրցումների հաղթող Ն. Մուշեղյանը («Տակտիկայի ուսուցման և կատարելագործման մի քանի հարցերը բմբշամարտում»), Եվրոպայի առաջնության մրցանակակիր Կ. Ջաներյանը («Ձախլիկ բռնցքամարտիկի դեմ մարտ վարելու առանձնահատկությունները»), Հայկական ՍՍՌ վաստակավոր մարզիչներ՝ դոցենտ Ս. Մամիկոնյանը («Խաղերը, որպես վաղ մասնագիտության առաջին աստիճան»), Հ. Գասպարյանը («Սուպերամարտի տեխնիկան»), մանկավարժական գիտությունների թեկնածու Գ. Պետրոսյանը («Դահուկորդի նախապատրաստական շրջանի երկրորդ փուլի մարզման օրինակելի պլան») և այլն։

Այս տարի ևս շարունակվելու է հասարակական հիմունքներով գրքերի ու բրոշյուրների հրատարակումը։ Նախատեսված է առաջին անգամ լույս ընծայել անվանի մարզիկներ Հ. Շահինյանի, Ի. Նովիկովի, Վ. Ենգիբարյանի, Ա. Աղարյանի և Ն. Մուշեղյանի սպորտային ինքնակենսագրական գրքերը[11]։

Գիտա-տեխնիկական ընկերության հասարակական խորհրդին կից 1961 թ. նոյեմբերից հասարակական հիմունքներով գործում է ասպիրանտուրա, որտեղ ընդգրկված են արդյունաբերական ձեռնարկությունների, շինարարական և տրանսպորտային կազմակերպությունների և գյուղատնտեսության բնագավառի 117 աշխատողներ։ Ասպիրանտուրան ունի երկու բյուրո՝ արդյունաբերության (ղեկավար՝ ակադեմիկոս Գ. Աղաջանյան) և գյուղատնտեսության (ղեկավար՝ ՀՍՍՌ գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ Մ. Սիմոնով)։

Ասպիրանտուրայի ղեկավարությունը իրականացվում է կոմիտեի միջոցով, որի կազմում են 7 գիտնականներ՝ ակադեմիկոսներ Մ. Կասյանը (ռեկտոր), Գ. Աղաջանյանը, ԳԱ թղթակից-անդամ Մ. Սիմոնովը, տեխնիկական գիտությունների թեկնածու Ի. Տեր-Ազարովը, դոկտոր-պրոֆեսոր Ա. Հարությունյանը և ուրիշներ։

Այսպիսով գիտական հիմնարկների, դերատեսչությունների աջակցությամբ հասարակական հիմունքներով ասպիրանտուրան արդեն դարձել է մեր հանրապետության գիտա-տեխնիկական կադրերի պատրաստման կենտրոններից մեկը։

ՍՄԿՊ Կենտկոմի դեկտեմբերյան (1963) պլենումից հետո՝ քիմիան գյուղատնտեսության մեջ լայնորեն կիրառելու համար մեր հանրապետության մի

---

11 «Коммунист», 15 апреля, 1964.

շարք արտադրական վարչություններում հասարակական հիմունքներով կազմակերպվեցին ագրոքիմիայի համալսարաններ։

1964 թ. հունվարին Արտաշատում տեղի ունեցան հասարակական հիմունքներով ստեղծված ագրոքիմիայի երկամյա համալսարանի առաջին պարապմունքները։ Համալսարանում սովորում են արտադրական վարչության կոլտնտեսությունների նախագահներ, սովխոզների դիրեկտորներ, կուսկազմակերպությունների քարտուղարներ, ջրային տնտեսության շրջանային բաժանմունքի, արտադրական վարչության և կուսակցական կոմիտեի ապարատների աշխատողները՝ ընդամենը 240 ունկնդիրներ[12]։

Ագրոքիմիայի համալսարանի ստեղծմանը և նրա գործունեությանը ակտիվ մասնակցություն են ունենում գյուղատնտեսական ինստիտուտի դասախոսներն ու պրոֆեսորները։ Համալսարանի պրոռեկտորն է ինստիտուտի կուսկոմի քարտուղար Ռ. Դավթյանը։ Բացի դասախոսություններից կազմակերպվում են նաև գործնական պարապմունքներ դաշտերում և ֆերմաներում, իրենց աշխատանքի փորձի մասին պարապմունքների ժամանակ ելույթներ են ունենում արտադրության առաջավորները։

Աշխատավորների կոմունիստական դաստիարակության, աշխատանքային և արտադրական կարգապահության բարձրացման, անօրինականությունների և չարաշահումների դեմ պայքար կազմակերպելու գործում հսկայական դեր են կատարում ընկերական դատարանները։ Մեր հանրապետությունում գործում են 2200 ընկերական դատարաններ, որոնցում ընդգրկված են 15 հազար մարդ[13]։ Կան նաև հասարակական մեղադրողներ, դատախազի օգնականներ, հսկիչներ, միլիցիայի արտահաստիքային աշխատողներ։

Մինչև վերջին ժամանակներս ընկերական դատարանները գերազանցապես զբաղվում էին աշխատանքային կարգապահության հարցերով։ Այժմ զգալի չափով ընդլայնվել են նրանց գործունեության շրջանակներն ու իրավունքները։ Գերագույն սովետի նախագահության հրամանագրերով ընկերական դատարաններին իրավունք է վերապահվել քննարկելու նաև մանր խուլիգանություն, սպեկուլյացիա, պետական, հասարակական ունեցվածքի մանր հափշտակումներ և խախտումներ կատարող անձանց գործերը։ Ընկերական դատարանները իրավունք ունեն նաև հիմնարկ-ձեռնարկությունների ղեկավարների առջև հարց բարձրացնելու իրավախախտումներ կատարած այս կամ այն անձանց աշխատանքից ազատելու, կամ 15 օրվա ժամկետով իջեցնելու ցածր աշխատանքի։

Ընկերական դատարաններին տվյալ ֆունկցիաների հանձնումը, որոնք նախկինում կատարում էին պետական օրգանները, հնարավորություն է տալիս բրեական պատիժները հասարակական ներգործության ազդեցությամբ փոխարինելու, ինչպես պահանջվում է ծրագրում. «Աշխատավորների նյութական սպառողության, կուլտուրական մակարդակի և գիտակցության աճը բոլոր պայմանները ստեղծում են, որպեսզի արմատախիլ արվի հանցագործությունը, վերջին հաշվով քրեական պատժի միջոցները փոխարինվեն հասարակական ներգործության միջոցներով»[14]։

---

12 «Սովետական Հայաստան», 28 հունվարի, 1964։

13 «Սովետական Հայաստան», 15 մայիսի, 1964։

14 «ՍՄԿՊ XXII համագումարի նյութերը», Հայպետհրատ, 1962, էջ 529։

Քաղաքներում, գյուղերում, ավաններում հասարակական կարգի, սովետական վարվեցողության կանոնները խախտողների, խուլիգանների ու հակահասարակական այլ արարքներ թույլ տվողների դեմ պայքարելու ուղղությամբ հսկայական գործ է կատարում 1959 թ. աշխատավորների նախաձեռնությամբ ծնունդ առած ժողովրդական դրուժիններիների մեծ բանակը։ Հանրապետությունում ակտիվ գործունեություն են ծավալել 1500 դրուժիններ, որոնցում ընդգրկված են 30 հազար էնտուզիազիստներ[15]։

Ժողովրդական դրուժիններ գործունեության մեջ առաջ են եկել նոր երևույթներ։ Ժողովրդական այդ ինքնագործ կազմակերպությունները օրեցօր զարգանում, կատարելագործվում են, դառնում հասարակական կարգի, սոցիալիստական սեփականության պահպանման հիմնական օղակներից մեկը։ Բավական ընդլայնվել են ժողովրդական դրուժիններ կազմակերպական շրջանակները, նրանց են միացել նաև «Կոմերիտական լուսարձակները», օպերատիվ շտաբները։ Կազմակերպական տեսակետից այդ միջոցառումը հնարավորություն է ընձեռել վերացնելու ժողովրդական դրուժիններ և մյուս կազմակերպությունների միջև եղած զուգահեռականությունը, պայմաններ է ստեղծել ավելի խոր ու հետաքրքիր դարձնելու ժողովրդական ինքնագործ այդ օրգանների աշխատանքի բովանդակությունը։ Այսպես, օրինակ՝ եթե սկզբնական շրջանում ժողովրդական դրուժիններ հիմնական գործունեությունը սահմանափակվում էր միայն փողոցներում շրջագայելով, ապա այժմ նրանք ակտիվ կերպով պայքարում են սոցիալիստական սեփականության վատնումների, անտնտեսվարության, սպեկուլյացիայի և չարաշահումների դեմ, օգնում են փողոցային երթևեկության կանոնները պահպանելու գործին։

Բնակչության բուժսպասարկումը ավելի լավ կազմակերպելու նպատակով 1962 թ. Երևանի № 2 բուժմիավորումը բացեց հասարակական հիմունքներով աշխատող բուժքույրերի պատրաստման դասընթացներ, որոնցում ընդգրկվեցին թաղամասի բնակիչներից շատերը. ավարտելով այդ դասընթացները բազմաթիվ տնային տնտեսուհիներ հասարակական հիմունքներով ստանձնեցին բուժքույրերի պարտականություններ։ Օրինակ Ս. Սարգսյանը, որը դասընթացներն ավարտելուց հետո անցել է գործի, հաճախակի փոխարինում է հիվանդանոցի բուժքույրերին, տեղամասային բժիշկների հետ շրջագայում թաղամասերը, ուսումնասիրում և բուժմիավորման քննարկմանն է ներկայացնում սանհիգիենայի հարցեր։ Սարգսյանն ունի նաև իր տեղամասը, որտեղ հաճախակի կազմակերպում է բնակիչների հավաքներ, քննարկում փողոցների սանիտարական մաքրության հարցեր, խորհուրդներ տալիս բնակիչներին[16]։

Հասարակական հիմունքները մեծ տեղ են գրավում նաև արհմիութենական աշխատանքներում։ Արհմիությունների հանրապետական կոմիտեներում հասարակական հիմունքներով գործող տարբեր հանձնաժողովները, բաժիններն ու տեսուչները լուրջ օգնություն են ցույց տալիս արտադրական կոլեկտիվների հետ կապն ամրապնդելու, արտադրության նկատմամբ արհմիությունների ազդեցությունը ընդլայնելու, աշխատավորների հանգիստը լավագույն ձևով կազմակերպելու, ձեռնարկություններում, շինարարությունում, տրանսպորտում

15 «Սովետական Հայաստան», 15 մայիսի, 1964։
16 «Երեկոյան Երևան», 15 հունվարի, 1964։

դաստիարակչական և կուլտ-մասսայական աշխատանքներ ծավալելու ուղղությամբ։

ՀԱՄԽ-ի մետալուրգիական արդյունաբերության աշխատողների արհմիության հանրապետական կոմիտեին կից գործում են աշխատանքի պաշտպանության արտահաստիքային բաժին, կուլտուր-մասսայական աշխատանքների հանձնաժողով, հրահանգիչներ։ Աշխատանքի պաշտպանության արտահաստիքային բաժինը ղեկավարում է Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետին կից պետական լեռնատեխնիկական տեսչության ինժեներ Ա. Թոխունցը։ Բաժնի հասարակական հրահանգիչների թվում են ժողտնտխորհի գունավոր մետալուրգիայի և լեռնահանքային արդյունաբերության վարչության աշխատակից Ն. Ջեբոտարյովը, ալյումինի գործարանի աշխատակից Մ. Թադևոսյանը, ինժեներներ Կ. Հարությունյանը, Լ. Պողոսյանը և ուրիշ ակտիվիստներ։

Հանրապետության մի շարք ձեռնարկությունների որոշ ղեկավարներ թերագնահատում էին տեխնիկական անվտանգության և աշխատանքի պաշտպանության միջոցառումները։ Այդ հարցը կոմիտեի խորհրդով ուսումնասիրեց արտահաստիքային բաժինը, որին մասնակցեցին ավելի քան 200 ակտիվիստներ։ Մասսայական այդ ստուգումը ձեռնարկություններին օգնեց վեր հանելու գոյություն ունեցող լուրջ թերություններ[17]։

Կոմունիստական հասարակական ինքնավարության անցնելու գլխավոր նախապայմանն այն է, որ հասարակական հիմունքների զարգացման հետ մեկտեղ բարելավվի կառավարման գործը։ Իսկ դրան կարելի է հասնել այն ժամանակ, երբ հասարակական հիմունքներով աշխատողները մշտապես կգտնվեն ժողովրդական լայն մասսաների վերահսկողության ներքո, կլինեն նրանց հաշվետու, կընտրվեն նրանց կողմից, սիստեմատիկաբար փոփոխության կենթարկվեն։

ՍՄԿՊ Կենտկոմի նոյեմբերյան (1962) պլենումը քննության առնելով ժողովրդական տնտեսության կուսակցական ղեկավարման արմատական հարցերը, նշեց ձեռնարկությունների ղեկավարման դեմոկրատական սկզբունքները ընդլայնելու և կատարելագործելու խնդիրները։ ՍՄԿՊ Կենտկոմի պլենումը բոլոր կուսակցական կազմակերպությունների, կուսակցական, տնտեսական օրգանների, արհմիությունների, կոմերիտմիության և ուրիշ հասարակական կազմակերպությունների ուշադրությունն է հրավիրում արտադրության ղեկավարմանը աշխատավորների մասնակցության դեմոկրատական սկզբունքների ընդլայնմանը, ձեռնարկությունների և շինարարության ղեկավարմանը լայն մասսաների ներգրավմանը և միանձնյա ղեկավարության ճիշտ զուգակցմանը»[18]։

Պլենումը նպատակահարմար է դտել խոշոր ձեռնարկություններում, շինարարությունում ստեղծել լայն ներկայացուցչական կազմակերպություններ՝ գործարանային, ֆաբրիկային, ցեխային արտադրական կոմիտեներ։ Այդ կոմիտեները կազմվում են բանվորներից, ինժեներներից, ծառայողներից, կուսակցական, արհմիութենական, կոմերիտական կազմակերպությունների ներկայացուցիչներից։ Արտադրական կոմիտեները մասնակցում են ձեռնարկությունների պլանների քննարկմանը, նրանց իրագործման նկատմամբ վերահսկողության սահմանմանը, կադրերի տեղաբաշխմանը և այլն։ Արտադրական կոմիտեների

17 «Коммунист», 24 марта, 1964.

18 ՍՄԿՊ Կենտկոմի 1962 թ. նոյեմբերյան պլենումի որոշումը։

ստեղծման հիմնական նպատակն այն է, որ ձեռնարկության գործերի ղեկավարման մեջ ներգրավեն ավելի շատ աշխատողներ։

Ներկայացուցչական կոլեկտիվ օրգանները նշանակալի դեր են կատարում արտադրության ղեկավարումը կատարելագործելու ուղղությամբ։ Ինչպես հայտնի է ձեռնարկություններում, շինարարությունում, տրանսպորտում ստեղծված մշտական գործող արտադրական խորհրդակցությունները զբաղվում են արտադրության ղեկավարման բոլոր հարցերով։ Այժմ ձեռնարկություններում, շինարարությունում արտադրության նորմաների սահմանումը, գոյություն ունեցող նորմաների վերանայումը՝ կապված նոր տեխնիկայի ներդրման և կազմակերպական այլ միջոցառումների հետ, բանվորների ու ծառայողների աշխատանքից ազատումը և այլ հարցեր ադմինիստրացիաները որոշում են միայն արհմիութենական կոմիտեների համաձայնությամբ։ Բացի դրանից արհմիութենական կոմիտեների գիտությամբ և համաձայնությամբ է կատարվում նաև ձեռնարկության ֆոնդային միջոցների օգտագործումը՝ կապված անհատական պարգևատրումների, կարիքավոր բանվոր-ծառայողներին օգնություն ցույց տալու հետ։

Պլենումը հատուկ ուշադրություն դարձրեց կուսակցական, պետական և հասարակական վերահսկողության կատարելագործման վրա, անհրաժեշտ համարեց երկրում վերափոխել վերահսկողության սիստեմը, նրա հիմքում դնելով կուսակցական և պետական վերահսկողության զուգակցման մասին լենինյան ցուցումները։ Անհրաժեշտ է ամուր վերահսկողություն սահմանել աշխատանքի չափի և սպառման չափի նկատմամբ, փակել ժուլիկների, ձրիակերների, կաշառակերների, բյուրոկրատների ճանապարհը։ Այդ աշխատանքները մեծամասամբ այժմ կատարում են հասարակական հիմունքներով աշխատողները։

«Իսկ կոմունիզմ,— նշում է Վ. Ի. Լենինը,— մենք անվանում ենք այն կարգը, երբ մարդիկ սովորում են կատարել հասարակական պարտականություններ առանց հարկադրման հատուկ ապարատների, երբ հանրության օգտին կատարած անվարձ աշխատանքը դառնում է ընդհանուր երևույթ»[19]։

Աշխատավորների կոմունիստական գիտակցության բարձրացման, նրանց մեջ դեպի աշխատանքը ունեցած կոմունիստական վերաբերմունքի սկզբունքները արմատավորելու շնորհիվ մեր հանրապետությունում օրեցօր ծնունդ են առնում հասարակական գործի ընդհանուր շահերը արտացոլող ժողովրդական ինքնագործ բազմաթիվ այլ կազմակերպություններ։ Հայկական ՍՍՌ կոմունալ տնտեսության մինիստրության հասարակական նախագծա-կոնստրուկտորական բյուրոն, որը ղեկավարում է երիտասարդ մասնագետ Կարլեն Եփրեմյանը, ճանաչում է գտել հանրապետությունում և նրա սահմաններից դուրս։ Իր գործունեության մոտ երկու տարվա ընթացքում շատ բան է արել բյուրոն։ Առաջին հանձնարարությունը, որը կատարվեց բյուրոյում ընդգրկված տասնյակ ճարտարապետների կողմից, դա տրանսպորտի համար ավտոմատ գանձարկղերի նախագիծն էր։ Հասարակական նախագծա-կոնստրուկտորային բյուրոյի էնտուզիազիստներից մեկի՝ Կ. Քոչարյանի առաջարկով կազմվեցին ավտոմատ գանձարկղերի նախագծեր և ուղարկվեցին մասսայական արտադրության։ Շուտով ավտոմատ գանձարկղերը լայն տարածում գտան ոչ միայն մեր հանրապետու-

---

19 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 30, էջ 356։

թյունում, այլև Միության մեջ և խթան հանդիսացան տրանսպորտում ինքնասպասարկումը լայնորեն ներդնելուն։

Նախագծա-կոնստրուկտորական բյուրոն հասարակական հիմունքներով կազմեց նաև Ապարանի շրջկենտրոն Մարալիկի ջեռուցման սիստեմի տեխնիկա-բանվորական նախագծերը, ձևավորեց Երևանի քաղաքային տնտեսության ավտոտրանսպորտի գիտատեխնիկական ընկերության հանրապետական կոնֆերանսում ցուցադրած ստենդները և այլն։ Երիտասարդ էնտուզիազիստները որոշել են կատարել հանրապետական ստադիոնի վերանախագծման աշխատանքները, ըստ որի հաշվի առնելով բնակչության պահանջները նախատեսվում է եղած հյուսիսային և հարավային տրիբունաների վրա կառուցել երկաթբետոնյա նոր տրիբունաներ, որտեղ կարելի է տեղավորել 10 շարք նստարաններ 8000 հանդիսատեսների համար։

Երևանի Մուրացանի անվան փողոցում հինգհարկանի բնակելի մի շենք կա, որտեղ բնակվող 1200 բնակիչներն ապրում են կոմունիստական կենցաղով։ Այստեղ բնակիչների ուժերով ստեղծվել են տաղավարներ, կանաչ տարածություններ, ճեմուղիներ, խաղահրապարակներ, կազմակերպվել երգի անսամբլ, որը ղեկավարում է վաստակավոր արտիստ Մ. Սենիքերիմյանը։ Բակում կառուցել են բաց էստրադա, գործում է օկորդիոնիստների խմբակ՝ Ռ. Ղազարյանի ղեկավարությամբ։ Շենքի բնակիչ Վիրաբյանը պատանիների և աղջիկների համար կազմակերպել է ֆոտոխմբակ։ Իրենց ուժերով բնակիչները բացել են արտեզյան ջրհոր՝ ոռոգման համար։ Այդ շենքը արժանացել է կոմունիստական կենցաղավարության կոչմանը։ Այստեղ չկա «իմ» և «քո» նեղ, սահմանափակ հոգսեր, անձնական, կամավոր ցանկություններ, և հրճվանքն ու հոգսերը, ուրախությունները ու ձախորդությունները հավասար չափով բաժանում են բոլորը[20]։

Այդ ամբողջ աշխատանքը, կոմունիստական կենցաղը արմատավորում է ոչ թե թաղային կոմիտեն, այլ շենքի հասարակական հիմունքներով ստեղծված կոմիտեն, որը ղեկավարում է շենքի բնակիչ Ա. Սահակյանը։ Կոմիտեի ջանքերով այստեղ արմատավորվել է ինքնասպասարկումը, գործում են ծնողական կոմիտեն, ձմեռային ակումբը, ամառային էստրադան։

Այս շենքի մարդիկ «ամենքն ունեն ուրույն անձնական հույզեր։ Բայց դրանք չեն պարփակվում իրենց բնավորություններում։ Այլ մշտապես այցելում են իրար, և դուրս գալով իրենց «ուրույն աշխարհից», մտնում են ամեն մի ուշադիր, համարձակ ու պարզ, բարի ու շիտակ, ինչպես աղնիվ բարեկամ ու ծայր է առնում մեծ զրույց ամենքի ու ամեն մեկի մասին,— ով ինչպես է ապրում, ով ինչով շնչում»[21]։

Հասարակական աշխատանքները սովետական քաղաքացիները կատարում են մեծ սիրով։ «Մեր նպատակն է,— նշում է Վ. Ի. Լենինը,— որ յուրաքանչյուր աշխատավոր անվնաս կատարի պետական պարտականությունները՝ արտադրողական աշխատանքի 8-ժամյա «դասը» վերջացնելուց հետո. դրան անցնելն առանձնապես դժվար է, բայց այս անցման մեջ է միայն սոցիալիզմի վերջնական ամրապնդման երաշխիքը»[22]։

20 «Երևկոյան Երևան», 26 մարտի, 1964։

21 Նույն տեղում։

22 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 27, էջ 328։

Կոմունիզմի կառուցման և պետության մահացման սոցիալ-տնտեսական գործոնների կողքին, Վ. Ի. Լենինը դնում էր նաև այն հարցը, թե որքանով սոցիալիստական հասարակության բոլոր անդամների համար կարմատավորվեն մարդկային համակեցության էլեմենտար նորմաները, որքանով բոլոր քաղաքացիները ակտիվորեն կմասնակցեն հասարակական կարգի ամրապնդմանը։ Կոմունիզմը կկառուցվի այն ժամանակ, երբ մարդիկ «աստիճանաբար կսովորեն պահպանել համակեցության տարրական, դարերից ի վեր հայտնի, բոլոր այբբենարաններում հազարավոր տարիներ կրկնած կանոնները, կսովորեն այդ կանոնները կատարել առանց բռնության, առանց հարկադրանքի, առանց հպատակման, առանց հարկադրանքի այն հատուկ ապարատի, որը պետություն է կոչվում»[23]։

Կոմունիզմի կառուցման ներկա ժամանակաշրջանում, երբ հասարակական, առանց հարկադրման աշխատանքը դառնում է միլիոնավոր մարդկանց համար սովորություն, առաջին կենսական անհրաժեշտություն, մարդկանց հասարակական կապերի մեջ առաջ են գալիս նոր հատկություններ՝ կոլեկտիվիզմ, ստեղծագործական փոխօգնություն, մարդասիրություն, անհաշտ վերաբերմունք չարության և անարդարության նկատմամբ։

Մասսաների հետ կապի ամրապնդման, պետության գործերի կառավարմանը ավելի շատ աշխատավորների ընդգրկման, հասարակական հիմունքների զարգացման գործում կարևոր դեր են կատարում սովետները և արհմիութենական կոմիտեները։ Սովետներում վերջին տարիներս իրենց գործունեությունն են աշխուժացրել հասարակական հիմունքներով ստեղծված մի շարք կազմակերպություններ։ Աշխատավորների դեպուտատների Երևանի բոլոր շրջանային սովետները չունեն առևտրի, առողջապահության, կուլտուրայի բաժիններ, իսկ այդ բնագավառներում, ինչպես հայտնի է հսկայական աշխատանք կա անելու։ Այս հարցում օգնության են հասնում հասարակական հիմունքներով գործող կազմակերպությունները՝ մշտական հանձնաժողովները, արտահաստիքային բաժիններն ու տեսուչները։ Երևանի Օրջոնիկիձեի շրջսովետին կից գործում են առևտրի, կուլտուրայի բաժիններ, որոնց շուրջը համախմբված տասնյակ ակտիվիստներ զբաղվում են շրջանի առևտրական, կուլտուր-լուսավորական հիմնարկների գործունեությամբ, ուսումնասիրում և սովետի գործկոմի քննարկմանն են ներկայացնում առանձին առևտրական օբյեկտների կամ կուլտուր-լուսավորական հիմնարկների աշխատանքի վերաբերյալ հարցեր։ «Ժամանակակից պայմաններում, երբ աշխատավորների դեպուտատների սովետները դարձել են համապարփակ կազմակերպություններ, հարկավոր է գործը կազմակերպել այնպես, որպեսզի սովետները հիմնվելով բազմաթիվ հանձնաժողովների, ինչպես նաև աշխատավորների ինքնագործ կազմակերպությունների վրա, ամեն օր յուրաքանչյուր քաղաքում, ավանում, գյուղում, յուրաքանչյուր տան մեջ, կատարեն դաստիարակչական, կուլտուր-լուսավորական աշխատանքներ»[24]։

Այսպիսով, ժողովրդական դեպուտատների սովետների աշխատանքներին աշխատավորական լայն մասսաների մասնակցությունը հնարավորություն կտա իրագործելու ՍՄԿՊ Ծրագրի այն իմաստուն պահանջը, որ «անհրաժեշտ է գործն այնպես անել, որ պետական վճարովի ապարատը կրճատվի, որ կառա-

23 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 25, էջ 601։
24 «ՍՄԿՊ Կենտկոմի հունիսյան (1963) պլենումի որոշումը», էջ 25—26։

ԳՐԱԴԱՐԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

վարման հմտություններին տիրապետեն ավելի ու ավելի լայն մասսաներ, և այդ ապարատում աշխատանքը հետագայում դադարի հատուկ պրոֆեսիա լինելուց[25]։

Այժմ աշխատավորների դեպուտատների սովետների գործկոմներում ընտրվում են նաև գործկոմի նախագահի հասարակական հիմունքներով աշխատող տեղակալներ, կուսակցական քաղկոմներում և շրջկոմներում՝ քաղկոմի ու շրջկոմի քարտուղարներ՝ իրենց ենթակա բաժիններով ու հրահանգիչներով։ Փորձը ցույց է տալիս, որ հասարակական հիմունքներով գործող այդ նոր օրգանները հսկայական դեր են կատարում սովետական, կուսակցական ապարատների գործունեության աշխուժացման ուղղությամբ։ Կոմունիզմի կառուցման ներկա էտապում տեղի է ունենում հասարակության գործերի կառավարման ձևերի փոփոխություն, որն իր հերթին էվոլյուցիա է ստեղծում պետության կառավարման ամբողջ սիստեմում։ Պետական կառավարման ֆունկցիաները հասարակական կազմակերպություններին հանձնելը, աստիճանաբար հասարակական ինքնավարության անցնելը հնարավորություն են տալիս վարչական օրգանների համեմատական կրճատման համար։

Երկու տարի առաջ Երևանի արդյունաբերական ձեռնարկությունների բազմատիրաժ թերթերը ղեկավարում էին հաստիքով աշխատող խմբագիրներ։ Այժմ մի շարք ձեռնարկություններում վերացել են այդ հաստիքները և թերթերի խմբագիրներ են դարձել հասարակական աշխատողները՝ ցեխերի պետերը, վարպետները։ Արդեն երկու տարի է ինչ Ս. Մ. Կիրովի անվան գործարանի «Կիրովեց» բազմատիրաժ թերթի խմբագիրն է ցեխի պետ Հ. Շավոյանը։

Հանրապետության բոլոր թերթերի խմբագրություններում գործում են բազմաթիվ արտահաստիքային բաժիններ, որոնք հսկայական աշխատանք են տանում թերթերն ավելի բովանդակալից դարձնելու համար։ «Երեկոյան Երևան» թերթի քաղաքային տնտեսության և կենցաղի բաժնին կից գործում է արտահաստիքային բաժին, որտեղ համախմբված են 12 ակտիվիստներ։ Բաժնի վարիչն է շինանյութերի ու կառույցվածքների ինստիտուտի աշխատակից Ս. Ակրաբաջյանը, գրական աշխատողները՝ 8-րդ պոլիկլինիկայի գլխավոր բժիշկ Լ. Քոչարյանը, պահեստի գնդապետ Ֆ. Սարդսյանը, Օրջոնիկիձեի շրջանի միլիցիայի բաժանմունքի քննիչ Վահրադյանը և ուրիշներ։

Սովետական, կուսակցական ապարատներում հասարակական հիմունքներով գործող բազմաթիվ բաժինների, տեսուչների, խմբերի ու հրահանգիչների, հանձնաժողովների ու խորհուրդների աշխատանքի փորձը ցույց է տալիս, որ հնարավոր է աստիճանաբար կրճատել որոշ հաստիքային աշխատողներ, նրանց ֆունկցիաները հանձնելով արտահաստիքային բաժիններին։

Ընկեր Ն. Ս. Խրուշչովը ՍՄԿՊ XXII համագումարում տված հաշվետու զեկուցման մեջ նշել է. «Մեր երկրում տեղի է ունենում սոցիալիստական պետականությունը հասարակական ինքնավարության վերաճելու պրոցեսը։ Որպես կոմունիստական հասարակարգ կառուցող ժողովրդի առաջավոր ջոկատ, կուսակցությունը պետք է առջևից ընթանա նաև իր ներպարտիական կյանքի կազմակերպման գործում, ցույց տալով կոմունիստական հասարակական ինքնավարության առավել կատարյալ ձևեր մշակելու օրինակ ու տիպար։ Գործնա-

25 «ՍՄԿՊ XXII համագումարի նյութերը», Հայպետհրատ, 1962, էջ 527։

կանորեն դա կարող է նշանակել, որ, ասենք, կուսակցական օրգանների ապարատը անշեղորեն կկրճատվի, իսկ կուսակցական ակտիվի շարքերը կաճեն։ Կուսակցական օրգաններում պետք է ավելի ու ավելի շատ լինեն հասարակական հիմունքներով աշխատող հանձնաժողովներ, բաժիններ, շրջկոմների և քաղկոմների հրահանգիչներ, քարտուղարներ»[26]։

Քաջարանը մեր հանրապետության արդյունաբերական երիտասարդ քաղաքներից մեկն է։ Այստեղ է գտնվում հանրապետության լեռնարդյունաբերության հսկան՝ Քաջարանի պղնձա-մոլիբդենային կոմբինատը։ Տարեցտարի աճում, զարգանում է քաղաքը։ Կառուցվում են նոր ձեռնարկություններ, բնակելի տներ, բացվում են նոր փողոցներ։ Այս նորաստեղծ քաղաքում մեծամասնություն է կազմում երիտասարդությունը։ Սակայն Քաջարանի կոմերիտական կազմակերպությունների ղեկավարությունը կատարում է ոչ թե հաստիքային ապարատը, այլ հասարակական հիմունքներով ստեղծված Քաջարանի ԼԿԵՄ կոմիտեն, որի կազմում ընդգրկված են 103 արտահաստիքային աշխատողներ։

1963 թ. սեպտեմբերի 13-ին Քաջարանում հրավիրվել է քաղաքային կոմերիտական կազմակերպության առաջին կոնֆերանսը[27], որը ՀԼԿԵՄ Կենտկոմի թույլտվությամբ փակ (գաղտնի) քվեարկությամբ ընտրել է քաղաքային կոմիտեի կազմը՝ 49 անդամ, 13 թեկնածու, 9 հոգուց բաղկացած վերաստուգիչ հանձնաժողով։ Ստեղծված են 5 բաժիններ՝ արդյունաբերության, գաղափարական, սովորող երիտասարդների, սպորտի և պաշտպանության, կոմերիտական կազմակերպությունների, հաշվառման սեկտոր, կոմերիտական «Լուսարձակի» շտաբ։ Յուրաքանչյուր բաժին ունի վարիչ և 3 հրահանգիչ։ Առաջադրված 9 հոգուց բաղկացած քաղկոմի բյուրոյի կազմն է. Քաջարանի պղնձա-մոլիբդենային կոմբինատի գլխավոր մեխանիկի տեղակալ Ե. Դևորգյան՝ քաղկոմի առաջին քարտուղար, «Քաջարանշին» տրեստի արդյունաբերական տեղամասի աշխղեկ Վ. Աբրահամյան՝ քարտուղարի տեղակալ, կոմբինատի ԼԿԵՄ կոմիտեի հաշվառման սեկտորի վարիչ Ս. Դևորգյանը, № 16 պրոֆտեխուսումնարանի վարպետ Ժ. Հարությունյանը, Ողջի միջնակարգ դպրոցի ավագ ջոկատավար Վ. Հակոբյանը, հիվանդանոցի բուժքույր Ն. Կարապետյանը, «Քաջարանշին» տրեստի բանվոր Ս. Գասպարյանը, կոմբինատի լեռնային արտադրամասի ԼԿԵՄ կազմակերպության քարտուղար Ս. Հարությունյանը։

Բացի բաժիններից քաղկոմին կից ստեղծված է ավագների խորհուրդ, որտեղ ընդգրկված են 7 կոմերիտականներ։ Խորհրդի ղեկավարն է կոմբինատի դիրեկտորի տեղակալ Լ. Խանֆերյանը։ Կոմերիտական քաղկոմն ունի իր օրգան «Կոմերիտական լուսարձակ» պատի թերթ։

Քաջարանի հասարակական հիմունքներով գործող ԼԿԵՄ քաղկոմը կոորդինացնում է քաղաքի բոլոր արտադրական, շինարարական, դպրոցական և հիմնարկային կոմերիտական կազմակերպություններին։ Այդ օրինակը վկայում է, որ հնարավոր է աստիճանաբար կրճատել պարտիական, կոմերիտական կոմիտեների վարձով աշխատողների հաստիքը՝ այն դարձնելով հասարակական հիմունքներով, որը հանդիսանում է կոմունիստական ինքնավարության անցնելու պայմաններից մեկը։

---

26 «ՍՄԿԿ XXII համագումարի նյութեր», էջ 134։

27 Տե՛ս ՀԼԿԵՄ Քաջարանի հասարակական հիմունքներով քաղկոմի ընթացիկ արխիվ, քաղկոմի I կոնֆերանսի նյութերը, արձանագրություն № 1։

Ներկա ժամանակում, երբ առաջ են գալիս պետական կառավարման նոր մասսայական կազմակերպություններ, կուսակցությունը, ինչպես նշված է ՍՄԿՊ Կենտկոմի նոյեմբերյան (1962) պլենումի որոշումներում, չպետք է մի կողմ կանգնի, ընդհակառակը պետք է ավելի բարձրանա նրա դերը, որպես ամենահեղինակավոր հասարակական կազմակերպության, նա պետք է ղեկավարի և ուղղություն ցույց տա բոլոր մյուս, հասարակական կազմակերպություններին։

Կուսակցության դերի բարձրացումը կոմունիզմի ծավալուն կառուցման ժամանակաշրջանում պայմանավորվում է կոմունիստական շինարարության մասշտաբների մեծացմամբ, սոցիալիստական դեմոկրատիայի հետագա ընդլայնմամբ, հասարակական կազմակերպությունների դերի բարձրացմամբ, հանրապետական և տեղական կազմակերպությունների իրավունքների ընդլայնմամբ։ Այսպիսով, կոմունիստական կուսակցությունը որպես համաժողովրդական կուսակցություն, հանդես է գալիս որպես հասարակական կազմակերպության բարձրագույն ձև, իրականացնում է ղեկավարությունը բոլոր մյուս կազմակերպությունների նկատմամբ, կոորդինացնելով և ուղղություն տալով բոլոր պետական և հասարակական կազմակերպությունների գործունեությանը։ Ղեկավարման ֆունկցիան հանձնելով հասարակական հիմունքներով ստեղծված կազմակերպություններին, աստիճանաբար պետք է կրճատել հաստիքային ապարատները։ Այդ պրոցեսը պետք է տեղի ունենա օրինաչափորեն, վերոհիշյալ կազմակերպությունների գործունեության աշխուժացման, այլ ոչ թե թուլացման պայմանով։ Սովետները, օրինակ, հասարակական կարգի պահպանման, բնակչության կենցաղային սպասարկման, կուլտուրայի, առողջապահության բնագավառների ղեկավարումը լիովին հանձնել են թաղային կոմիտեներին, մշտական հանձնաժողովներին, ժողովրդական դրուժիններին, հասարակական հիմունքներով ստեղծված առևտրի, կուլտուրայի բաժիններին, ընկերական դատարաններին։ Այդ բնագավառների ղեկավարությունը հանձնելով հասարակական կազմակերպություններին, սովետները սերտ համագործակցում են նրանց հետ, օգնում այս կամ այն հարցի լուծմանը։

Եթե փորձենք ամփոփել մեր ասածը, ապա կարելի է նշել, որ հասարակական հիմունքներով աշխատանքը կոմունիզմի ծավալուն կառուցման ներկա էտապում զգացնել է տալիս կյանքի բոլոր բնագավառներում։ Հասարակական հիմունքներով գործող կազմակերպությունները կոմունիստական հասարակության ծիլերն են, որոնք զարգանալով, վերափոխվելով և կատարելագործվելով կդառնան նոր հասարակարգի կառավարման օրգաններ։

Այժմ դժվար է ասել, թե հասարակական հիմունքներով գործող բազմաթիվ կազմակերպություններից, որը կդառնա համաժողովրդական օրգան, բայց զարգանալով, կատարելագործվելով կստեղծվի մի նոր «հասարակական կազմակերպություն, որի միջոցով հասարակությունը պետք է կարգավորի իր հարաբերությունները»[32]։

Կոմունիզմի ժամանակ կարող է լինել այնպիսի հասարակական կազմակերպություն, որը կժառանգի այն բոլոր լավ հատկանիշները, որոնք ստեղծել են կուսակցությունը, կոմերիտմիությունը, պետական և հասարակական կազ-

32 Համկեմ XIV համագումարում արտասանած ընկ. Ն. Ս. Խրուշչովի ճառից (տես «Սովետական Հայաստան», 22 ապրիլի, 1962)։

մակերպությունները։ Այժմ բոլոր հասարակական կազմակերպություններն ունեն իրենց առանձին ֆունկցիաները, խնդիրները։ Սակայն բոլոր այդ կազմակերպությունների ընդհանուր խնդիրն այն է, որ իրենց գործունեությունը ուղղեն երկրի տնտեսության հետագա էլ ավելի բարգավաճմանը, կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծմանը, ժողովրդի կուլտուրական ու կենսական մակարդակի բարձրացմանը, կոմունիստական հասարակության մարդու դաստիարակմանը։ Հետագայում, աստիճանաբար փոփոխման կենթարկվեն, մահանան հասարակական կազմակերպությունների սպեցիֆիկ ֆունկցիաները, պահպանելով ընդհանուրը, հասարակության շահերին համապատասխանող, ժողովրդի կողմից ընդունված ֆունկցիաները։

Պետության մահացման պրոցեսը տեղի կունենա պետության ֆունկցիաներն աստիճանաբար հասարակական կազմակերպություններին հանձնելու և, ինչպես վերևում նշեցինք, պետական ապարատի աստիճանաբար կրճատման միջոցով։ Այդ կկատարվի ոչ միայն պետական ֆունկցիաներն աստիճանաբար հասարակական կազմակերպություններին հանձնելու, այլև հենց պետական ապարատի աշխատանքի մեթոդի վերափոխման միջոցով։ Հրամաններին, հարկադրական միջոցներին կփոխարինեն դաստիարակչական և կազմակերպական բնույթի միջոցառումները։

1956 թ. ՍՍՌՄ Գերագույն սովետի հրամանագրով վերացվել են աշխատանքը լքելու համար դատական պատասխանատվության ենթարկելու պատժիչ միջոցները։ Այդպես է նաև մանր խուլիգանություն կատարելու դեպքում դատական պատասխանատվության ենթարկելու հարցը։ Այժմ այդպիսի հարցերի լուծումը դրված է ընկերական դատարանների, կոլեկտիվների վրա։ 1959 թ. սեպտեմբերին 21-ին Ն. Ս. Խրուշչովը ամերիկյան արհմիությունների լիդերների հետ ունեցած զրույցի ժամանակ ասաց. «Մենք կրճատում ենք զինված ուժերը, կրճատում ենք միլիցիան, պակասեցնում ենք պետական անվտանգության օրգանների աշխատողներին։ Պետության կառավարման և կարգի պահպանման ավելի շատ ֆունկցիաներ տրվում են հասարակական կազմակերպությունների ձեռքը»[33]։

Սակայն պետության մի շարք ֆունկցիաների հասարակական կազմակերպություններին հանձնելը չի նշանակում պետական օրգանների գործունեության թուլացում։ Ընդհակառակը, մի կողմից պետությունն օգտագործելով դաստիարակչական և համոզման մեթոդը ավելի է մերձենում հասարակական կազմակերպություններին, իսկ մյուս կողմից՝ հասարակական կազմակերպություններն իրենց վրա վերցնելով պետական մի շարք ֆունկցիաներ, պետության կառավարման և տնտեսության ղեկավարման պարտականություններ, ավելի սերտորեն են կապվում սովետական համաժողովրդական պետության հետ։ Պետական և հասարակական կազմակերպությունների ընդհանուր գործի համար կատարած ֆունկցիաների մերձեցումը կատարվում է աստիճանաբար, առանց խանգարելու մեկը մյուսին, ընդհակառակը, նրանք օգնում, աջակցում են միմյանց, այդ ֆունկցիաները կատարում դեմոկրատական սկզբունքներով։

Այսպիսով, պետական և հասարակական կազմակերպությունների ֆունկցիաների մերձեցումը պայմաններ է ստեղծում կոմունիստական հասարակական ինքնավարության անցնելու համար։

---

33 «Սովետական Հայաստան, 23 սեպտեմբերի, 1959։

Հասարակական հիմունքների զարգացումը կարևոր նշանակություն ունի կոմունիստական հասարակության ծավալուն կառուցման ներկա էտապում։ Հասարակական հիմունքներով ստեղծված ժողովրդական ինքնագործ կազմակերպություններում ընդգրկված հազարավոր աշխատավորներ ակտիվորեն մասնակցում են մեր հանրապետության պետական իշխանության, ժողովրդական տնտեսության ու կուլտուրական շինարարության ղեկավարմանը։ Հասարակական հիմունքներով գործող կազմակերպությունները, Լենինի խոսքերով ասած, ապագա հասարակության ծիլերն են, որոնք «...պրոլետարական պետական իշխանության աջակցությամբ... չեն թառամի, այլ կաճեն ու կզարգանան՝ վերածվելով լիակատար կոմունիզմի»[34]։

Այժմ, կոմունիզմի ծավալուն կառուցման ժամանակաշրջանում, պարտիայի ու կառավարության ղեկավարությամբ արագորեն աճում ու զարգանում են կոմունիզմի ծիլերը՝ իրենց առողջ արմատները տարածում մեր հասարակության պարարտ հողում։

А. А. Садагян

РАЗВИТИЕ ДВИЖЕНИЯ ЗА ТРУД НА ОБЩЕСТВЕННЫХ НАЧАЛАХ В НАШЕЙ РЕСПУБЛИКЕ

Резюме

В ходе строительства коммунистического общества изменяются и усовершенствуются формы и методы управления народным хозяйством и культурного строительства. За последние десять лет, особенно после XXI и XXII съездов КПСС, созданы и развиваются многочисленные самодеятельные народные организации, действующие на общественных началах.

На промышленных предприятиях, стройках, транспорте, в учреждениях, партийных, советских и профсоюзных органах Армянской ССР на общественных началах активно действуют бюро экономического анализа, советы новаторов и рационализаторов, разнообразные комиссии, отделы, инспекторы, научные и конструкторские учреждения и другие общественные организации, которые своей активной деятельностью оказывают действенную помощь партийным, советским и хозяйственным органам в деле создания технической базы коммунизма, развития коммунистических отношений, воспитания нового человека.

Развитие общественных начал является основой перехода от социалистического государства к коммунистическому общественному самоуправлению.

34 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 29, էջ 526։